Առաջաձոր

Բնակչություն՝ 156

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100մ,

Առաջաձոր գյուղը գտնվում էր պատմական Սյունիքի Բաղք գավառում: Բնակիչների նախնիների մի մասը բնիկ է, մյուսը եկել է տարբեր տեղերից՝ Ղարաբաղի Առաջաձոր գյուղից (1760-70թթ.), Գողթնից (1805-1806թթ.), Ղարադաղից (1829թ.): Նախախորհրդային շրջանում գյուղում կարևոր դեր էին խաղում Մելիք-Ստեփանյանները: Առաջաձորում են ծնվել 1918-20թթ. Կապանի ազգային խորհրդի նախագահ, ճանաչված մտավորական, հասարակական քաղաքական գործիչ Սմբատ Մելիք-Ստեփանյանը, գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վաղինակ Ոսկանյանը, ՀՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Հրանտ Ոսկանյանը: Առաջաձորը 1958թ. միավորված էր Նորաշենիկի պետական տնտեսության հետ, 1991թ. որպես առանձին վարչական միավոր կազմավորել է Առաջաձորի գյուղական խորհուրդը՝ տարանջատվելով Նորաշենիկի գյուղխորհուրդից: Գյուղում կար դեռևս 1898թ. կառուցված դպրոց:Առաջաձորի շրջակայքում կան միջնադարյան գերեզմանոցներ, «Կռապաշտ» կոչվող գյուղատեղի, եկեղեցիներ, իսկ գյուղի կենտրոնում գտնվող 1480թ. Մելիք-Ստեփանյանների կողմից կառուցված եկեղեցին կանգուն է: Գյուղում է գտնվում Մելիք-Ստեփանյանների տոհմական դամբարանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1287 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 229 հա, որից՝
- վարելահող՝ 99 հա, խոտհարք՝ 3 հա, արոտ՝ 83 հա, այլ հողատեսք՝45հա
- բնակավայրերի հողեր՝ 47 հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 7 հա,
- անտառային հողեր՝ 997 հա, որից անտառածածկ՝ 968 հա
- ջրային հողեր՝ 6 հա